

ՄԱԳԻՍՏՐՈՍՅԱՆ ՍԿՋԻՆԱԳՅՈՒՐՆԵՐԻՆ ԱՂՎԱՆՔ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԾԱՐ  
(ՔԵԼԻԱԶԱՐ) ԳԱՎԱՌԻ ՄԱՍԻՆ

Ս. Մ. ՄԻՒԹԱՐՅԱՆ

1918 թ. հունիսին կովկասյան թաթարներին առաջին անգամ հաջողվեց ստեղծել իրենց բուֆերային պետությունը: Հետագայում նրանք իսկապես մեծ նվաճումներ ունեցան կյանքի գրեթե բոլոր բնագավառներում:

1920 թ. ապրիլին այն խորհրդայնացվեց և վերանվանվեց Ադրբեջանական ԽՍՀ: Օգտվելով առիթից՝ Ադրբեջանն սկսեց յուրացնել իրեն «շնորհված» պատմաաշխարհագրական տարածքը, և ադրբեջանցիք կառնեցին Աղվանքը «սեփականացնելու» գաղափարից<sup>1</sup>:

Ընդարձակածավալ Աղվանքը (Ալրանիա) նրանց պնդմամբ պետք է նույնացնել Ադրբեջանական հանրապետության հետ: Մի բան, որ միանգամայն անընդունելի է<sup>2</sup>:

Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում» այդ երկրի տեղը նկարագրված է հետևյալ կերպ. ընդհանուր Ասիայի 21-րդ երկիրը Ալրանիան է, այսինքն՝ Աղվանքը, որը գտնվում է Վրաստանից արևելք: Սահմանակից է Սարմատիային՝ Կովկասյան լեռներով, և տարածվում է մինչև Հայաստանի սահմանը՝ Կուր գետի մոտով<sup>3</sup>: Ուրեմն բուն Աղվանքը գտնվել է Կուր գետի ձախակողմյան ափին՝ ունենալով իր Կապադակ մայրաքաղաքը:

Հայոց Ուտիք, Արցախ և Փայտակարան աշխարհները կոչվում էին Հայոց Արևելից կողմանք և սահմանակից էին Աղվանքին: Այդ Հայոց Արևելից կողմանքը ևս հայտնվեց նորանկախ Ադրբեջանի կազմում, իսկ երկրամասի հայ բնակչությունը ենթարկվեց ճնշումների, ինչպես քրդերը, թալիշները և մյուսները<sup>4</sup>:

1988—90 թթ. Ադրբեջանում հայ բնակչության նկատմամբ իրականացվեց ցեղասպանություն: 300-հազար հայեր տեղահանվեցին Գանձակից, Խանլարից, Շահումյանից և այլ վայրերից: Հայերից պետք է «ազատագրվեք» նաև ԼՂԻՄ-ը: Ուտի այն շրջափակվեց և այնտեղ սանձաղերծվեց լայնածավալ մի պատերազմ:

Ադրբեջանը անմիջապես շրջանառության մեջ դրեց մարզի լուծարման գաղափարը: Սակայն հակադրվելով այդ քայլին՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Արցախն իրեն հռչակեց հանրապետություն: Ադրբեջանի սկսած պատերազմին արցախահայերը պատասխանեցին զինված ինքնապաշտպանությամբ: Նախ՝ ճեղքվեց շրջափակման լաշինի օղակը, ինչը կենսական նշանակություն ուներ փոթորիկ Արցախի համար: Իսկ ավելի ուշ Ադրբեջանը կորցրեց նաև Քելրաջարի շրջանը, որ մեծաքանակ զորքեր էին կուտակված և սպառնում էին կրկին փակել լաշինի միջանցքը: 1993 թ. գարնանը Արցախն իր անվտանգության համար ապատագրեց նաև դեպի Արաքսի հովիտն ընկած պատմական գավառների մի մասը և սահմաններով վերամիավորվեց Հայաստանի հետ: Արևմուտքում դա որակվեց իբրև Հայաստանի կողմից Արցախի բռնագավառում (ՄԱԿ-ի թ. 822, 853 բանձները): Անտեսվեց Արցախի ինքնորոշման արդեն իսկ վավերացված փաստը (1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեն):

Հայտնի է, որ Հայոց Արևելից կողմանքը (այդ թվում նաև Արցախը) համարվում էր Մեծ Հայքի կարևորագույն մասերից մեկը երկրի հյուսիս-արևելքում: Մոզսես Խորենացին, Նղիշեն, Մոզսես Կաղանկատվացին և այլ պատմիչներ հստակորեն տարանջատում են Հայոց Արևելից կողմանքը Աղվանք (Ալրանիա) պետությունից:

<sup>1</sup> Տե՛ս Էնայեթլլան Իեզա, Ազերբայջան և Առան (Կովկասյան Ալրանիա), Երևան, 1994, էջ 46—83:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Шахназарян, Некоторые вопросы истории Албании..., «Բաները Երևանի համալսարանի», թ. 3, Երևան, 1987, էջ 68—74:

<sup>3</sup> Տե՛ս Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 290:

<sup>4</sup> Տե՛ս В. Григорян, Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ереван, 1992, էջ 4—52:

<sup>5</sup> Տե՛ս Կայվիդ Լանգ, Քրիստոֆեր Ուոլբր, Հայերը, Երևան, 1992, էջ 75—77:

11-րդ դարի մշակութային և քաղաքական մեծատաղանդ գործիչ Գրիգոր Մագիստրոսը բացառություն չի կազմում: Նա շատ առիթներով խոսում է Հայոց Արևելից կողմանքի և Աղվանք (Ալբանիա) պետության մասին՝ վարչաքաղաքական առումով առանձնացնելով դրանք մեկը մյուսից: Մեծ գորավարը մի քանի անգամ անդրադառնում է նաև Սար գավառին, ինչը մեզ համար կարևոր նշանակություն ունի այժմ:

Մերօրյա Քելրաչարը «ադրբեջանացված» նախկին հայկական Քարվաճառ գավառն է: Այն նախապես կոչվում էր Սար կամ Վայկունիք և համարվում էր Արցախի 13-րդ գավառը<sup>6</sup>: Երկակացին՝ նշում է, թե այս տարածքներից արդյունահանվում է քարախունկ<sup>7</sup>, Կարելի է կարծել, որ քարախունկը նաև վաճառվել է: Թվում է, թե Քարվաճառ անունը ծագել է քարախնկի հումքի արտահանման և վաճառքի փաստից: Դա էլ հետագա ադրբեջանական աղավաղմամբ դարձել է Քելրաչար:

Սկզբում Քարվաճառը եղել է գյուղ կամ ավան, ինչից ծագել է խորհրդային տարիների այս ադրբեջանական շրջանի անունը, որը հատկապես բարգավաճեց հետպատերազմյան տարիներին:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990—1058) մի քանի անգամ գործածում է Սար անունը, Դրանից իմացվում է, որ գոյություն են ունեցել Սար ավան, նույնանուն գավառ և գետ: Սար գետը Քարթլոսի վերին վտակն է, Սար ավանը՝ այժմյան Զառ ավանը, իսկ Սար գավառը՝ Քելրաչարի շրջանը:

Գրիգոր Մագիստրոսը իր փեսա Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված թղթերից մեկում գրում է, թե Սար ավանի մոտերքում եղել է մի վիթխարի գիհու ծառ, որի գերաններից կառուցված էր Սուրբ Հակոբի փայտյա մատուռը: «Անեմ քեև ի մեբում սեփհակաեին իսկ յԱղուանեանն աշխարհի աւանն կոչեցեալ Սար, և ահա ոչ ծեբքարանիմ քեզ մակարտեսալն վաղանջուց գեղեցկուղէն գի, յորմէ սիւնս ոչ սակաւս, հնօրս և ստուարս ի կոշարանում անդ տեսեալ մեր և գերանք դերակատարք և երկայնածիփք, որ է վկայարան սրբոյն Յակոբայ...»<sup>8</sup>:

Ուշագրավ է, որ Մագիստրոսը խոսում է «մերում սեփհական յԱղուանեանն աշխարհի» մասին՝ հաստատելով, որ Հայոց Արևելից կողմանք հասկացությունը հազարամյա հնություն ունի: Արցախ, Ուտիք և Փայտակարան գավառները հաճախ կոչվել են նաև «մերում սեփհական Աղուանից աշխարհ» կամ պարզապես՝ Աղվանք: Բայց այս դեպքում այն չպետք է շփոթել Կուրի ձախափնյա մատու գտնվող բուն Աղվանքի կամ Ալբանիայի հետ:

Աղվանագիտության «ադրբեջանական տարբերակը», շփոթ առաջացնելով Աղվանք և Հայոց Արևելից կողմանք հասկացությունների միջև, Աղվանք պատմաաշխարհագրական հասկացությունը տարածում է այժմյան Ադրբեջանի բոլոր տարածքների վրա: Դրանով ադրբեջանցիները «դառնում են» Աղվանքի բնիկները, իսկ Արցախը՝ Աղվանքի «անտարանջատելի մասը»:

Ամեն ինչ արվել է, որ նաև գիտության մեջ «նվաճվեն» Աղվանք (Ալբանիա) հայրենիքը<sup>9</sup> և նրան հարակից հայոց գավառները: Քանի որ այս «գործի հեղինակները» սկզբից ևեթ ցանկացել են յուրացնել մեր տարածքները, ուստի փորձել են գաղափարական հիմք նախապատրաստել դրա համար: Իսկ ուսմանը խորհրդային շրջանում «ամոթխածություն» էին անում՝ շրվիթավորելու համար Թուրքիայի հանրապետության ղեկավարներին:

60-ական թվականներին «աղվանագետների» ախորժակը ահեղի շափերի հասավ: Հայագետներ Աս. Մնացականյանը և Պ. Սևակը հանդես եկան հողվածով, որով կորականապես մերժեցին այն տեսակետները, որոնցով հանդես էր գալիս այդ ասպարեզում «փայլած» Զ. Բուենիաթովը<sup>10</sup>:

Այս և մյուս հեղինակների հակասություններով լի «ալբանագիտական» աշխատությունները և «ալբանական հայրենիքի» մարմաչը նրանց հասցնում է անհեթեթությունների: Ադրբեջաններն լեզվով լուսննալով որևէ «ալբանագիտական» նյութ կամ սկզբնաղբյուր՝ նրանք Աղվանքի մասին հայ պատմիչների կամ ժամանակագիրների երկերի ուսուրեն բնագրերը ադրբեջաններն թարգմանելիս այդ եզակի սկզբնաղբյուրները առանց բացառության «խմբագրում» են: Հակառակ պատճառներով դա արվում է աղբյուրագիտական «հիմք» նախապատրաստելու ակնհայտ մտադրությամբ: Իսկ հետո հայտարարվում է, թե իբր ադրբեջանական աղբյուրները այս կամ այն հարցը այլ կերպ են լուսարանում: Բայց կա՞ն արդյոք ադրբեջանական աղբյուրներ: Այդ-

<sup>6</sup> Տե՛ս Ք. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984, էջ 234:

<sup>7</sup> Տե՛ս Անանիա Երևակացի, Մատենագրություն, էջ 295:

<sup>8</sup> Կրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 221:

<sup>9</sup> Տե՛ս Գառնիկ Ասատրյան, Ինկուլայ Գևորգյան, Ադրբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը, Երևան, 1990, էջ 6—21:

<sup>10</sup> Տե՛ս Ասատուր Մնացականյան, Պտույր Սևակ, Զ. Բուենիաթովի «Ադրբեջանը 7—9-րդ դդ.» գրքի առթիվ (ուսուրեն), «Պատմա-բանասիրական հանդես», թ. 1, Երևան, 1967, էջ 177—190:

պիսի հարցադրումներին աղբյուրները պատասխանում են «զուտապ» լուծվումը կամ, ավելի շուտ, շրջահատվող աղմուկով: Ի դեպ աղբյուրագիտական գեղծումների և հանրահայտ գիտական փաստերի աղավաղման դեմ բողոքում են նաև իրանցի արևելագետները՝ վկայակոչելով եվրոպացի և ռուս պատմաբանների նույնատիպ կարծիքները<sup>11</sup>:

Միայն հայկական բնագրերն ու պատմիչները չէ, որ սեփականվել են: Պարզվում է՝ այդ նույն ճակատագրին են արժանացել նաև աղգությամբ պարսիկ հեղինակները: Նրեամուռն, օրինակ, նրանք անվերապահորեն աղբյուրների են համարում: Հիմնավորումը գալիս է այն պարզունակ տեսակետից, թե նա, ով երբևէ ծնվել է այժմյան Աղբյուրանական Հանրապետության տարածքների վրա, աղբյուրների է՝ անկախ ժամանակից, և այն ինչ երբևէ ստեղծվել է այդ տարածքի վրա, պատկանում է աղբյուրանական ժողովրդին: Այդ նույն սկզբունքով աղբյուրանցի են համարվում (իհարկե ըստ իրենց) Ուտիբում և Արցախում ծնված Մովսես Կաղանկատվացին, Դավթակ Քերթոզը, Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին և այլք<sup>12</sup>:

Հնամենի Սար ավանը այժմ վերանվանված է Զառ: Այն առողջարանային վայր է, որը «եղել է պատմական Վայկունիք գավառի կենտրոնը, ուր էին «բաղնիք տրաքունիք» Զերմուկը, այժմ Խատիսու առողջարանը: Հետագայում գյուղի անունով Սար է կոչվել ամբողջ գավառը... Սառ գյուղը միշտ եղել է իշխանանիստ կենտրոն, իսկ վերջին դարերում՝ մեխիթանիստ»<sup>13</sup>:

Սարի և նրան մերձակա բուժիչ աղբյուրների ու ջրերի մասին Գրիգոր Մագիստրոսը գրում է Հայոց Գագիկ Բ (1042—1045 թթ.) արքային ուղղված մի նամակում: Իր՝ նշված թղթում Մագիստրոսը խոսում է բնիկ հայրենական բնակավայրի մասին: Խոսքը խրթին է, բայց պարզ տրվում է այս վայրի նկարագրը և հայկական պատկանելությունը:

Նա գրում է. «Բայց ի փախստենս իւրում զիա՞րդ ոչ առ մեզ փութացաւ ապաստանել, զի զփորձաթիւն յուզողացն անդրէն նահանջեալ ի զուլխս իւրեանց զարձուցանէի: Ապ՛ եթէ վարդապետն թո ծայրագոյն, ի Սար ծարաւի ծորեալ, ի քէն Զերմուկն ջայլիր ջոկ կապեալ շնարհարացոյ, շատագով քաջին շնուցանէն, զի՞նչ իմ առ այս վնաս վարանելի վտանգ ի վերայ կացուցանես՝ վտարել վիրօք զրահետ վարեալ նետիւք»<sup>14</sup>:

Սարի կողմերը փախած վարդապետի գործունեությունը անդժվածային է: Մագիստրոսը դժգոհ է հայոց արքայից, որ գաղտնաբար Սար է ուղարկել մի ինչ-որ վարդապետի՝ իր համար կասկածելի նպատակներով, քանի որ նա այստեղ սեփական կալվածքներ ուներ:

11-րդ դարում Սար գավառում ապրում էին հայեր, ինչպես որ դրանից դարեր առաջ և դարեր հետո: Այնտեղ այլազգիներ չկային: Նրանք հայտնվեցին շատ ավելի ուշ՝ 16—18-րդ դարերում: Տեղանունների անվանափոխությունն հետևեց նրանց մուտքին և տարածքում հաստատվելուն: Եվ աղբյուրանական «գիտնականների» այն պարզ վարժանքները, թե իսր Քելրաշարը իրենց «պատմական» հայրենիքի մի մասն է, չի հաստատվում և չի կարող հաստատվել: Նրանք՝ այդ «աղվանները», առանձնակի արհամարհանք ունեն հատկապես քրիստոնեական հուշարձանների հանդեպ, որոնք այս տարածքների վրա շատ են և ենթարկվել ու ենթարկվում են անասելի թալանի, բարբարոսական ավերումների ու ոչնչացման: Աղբյուրանցիք փորձում են «չնչել» այդ տարածքում ապրած ժողովուրդների և նրանց ստեղծած մշակույթի հետքերը, ուրիշ ոչինչ:

Գրիգոր Մագիստրոսն իր ծախսերով կառուցել էր մի շարք ճարտարապետական հուշարձաններ, որոնց վրա պահպանվել են հետաքրքրական արձանագրություններ: Դրանցից մեկը Բջնիի սուրբ Աստվածածնի եկեղեցու 1031 թ. արձանագրությունն է, որտեղ իշխանը խոսում է իր կատարած նվիրատվության մասին. «Թ. ՆՁ. Շնորհին Աստուծոյ այս հրամանք է իմ տեսան Պետրոսի եւ Սմբատ Շահնշահի որ հաստատեաց եպիսկոպոսարան ի Բջնի քաղաքս զսուրբ Աստուածածինս. հիմնարկեալ կատարեց Գրիգոր իշխանաց իշխան որդի Վասակայ... եւ արդ այս է բնական եւ առջին սահմանահար վիճակ եւ աթ(ոռ) եոր հաստատեցաք եւ շրջաբերականով զսահմանահար վիճակս սորա, որ է Յարեւելից ի Սար գետոյ մինչև ի գետն Ախուրեան»<sup>15</sup>:

Իր սեփական կալվածքում կառուցած տաճարը ընդարձակ հողատարածքներով նա նվիրում է հայ եկեղեցուն: Վիմագիրն ավարտվում է՝ բող պատժվեն նրանք, ովքեր կփոխեն արձանափոխ սահմանները անհեծքով: Անշուշտ, Սար գավառը բնիկ հայկական տարածք էր, և Մագիստրոսը նրա արևմտյան մասից որոշ հողեր է հատկացնում ս. Աստվածածնի եկեղեցուն, որովհետև Բջնին թեմական կենտրոն էր: Այդ հողերը համարվում էին անձնամխելի: Իսկ գավառի տարածքում այդ ժամանակ դեռևս չկար աղբյուրանցիների հետքն անգամ:

<sup>11</sup> Տե՛ս էնայեթուլլան Թեզա, Ազարբայջան և Առան, էջ 47—48:

<sup>12</sup> Տե՛ս Աս. Մեղացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, Երևան, 1966, էջ 181—240:

<sup>13</sup> Դիվան հայ վիմագրության, հ. 5, Երևան, 1982, էջ 217:

<sup>14</sup> Գրիգոր Մագիստրոս, Քղթեր, էջ 209—210:

<sup>15</sup> Վ. Ալիշան, Այրարատ..., Վենետիկ, 1890, էջ 271:

Ծար գետն անցնում էր Ծար գավառով: Ավանը գտնվում էր գետի վերին հոսանքի վրա: Գավառը Արցախի արևմտյան մասում էր գտնվում և նշանակալից դեր էր կատարում Սյունիքը Արցախին և Ուտիքին կապող հաղորդակցության ճանապարհների խաչմերուկում: Գվին-Պարտավ միջազգային առևտրական տարանցիկ ճանապարհն անցնում էր Ծարով: Նրանցից մեկը թեքվում էր դեպի ձախ և Մոավի (այժմյան՝ Օմարի) լեռնանցքով իջնում դեպի Ուտիքի հարավային մասերը, մյուսը թեքվում էր դեպի հարավ՝ Բերդաձորի կողմերը, իսկ Կենտրոնական ճանապարհը գետի հովտով շարունակվում էր մինչև Պարտավ (այժմ՝ Բարդա) և Աղվանքի մայրաքաղաք Կապադակ: Այս ճանապարհները գործել են մինչև 20-րդ դարի սկիզբը, թեև նախկին բնակավայրերը այլևս չեն եղել կամ փոխվել են նոր բնակավայրերով և նոր բնակչությամբ: Թարթառի հովտով դեպի Արցախի միջնաշխարհ գնացող ճանապարհը մի կողմից, մյուս կողմից՝ քարեխառն կլիման և բուժիչ ջրերի գոյությունն այստեղ, ինչպես նաև եկեղեցիների, խաչքարերի և այլ պատմամշակութային հուշարձանների գոյությունը Ծարում՝ նրան կարևոր դեր են հատկացնում Արցախ աշխարհի ողջ մշակութային և տնտեսական կյանքում: Աղբրեանցից այս տարածքների կապակցությամբ չեն կարող խոսել պատմական ժառանգության դիրքերից: Պատմությունը նրանց այդ հնարավորությունը չի տալիս: Ու ինչպես տեսանք, Աղվանք (Ալբանիա) պետությունը տարբերվում էր Հայոց Արևելից կողմանքից (Ուտիք, Արցախ և Փայտակարան գավառներ), և աղբրեանցիների արհեստական «շփոթը» կամ «ըմբոստ ելույթները» սնանկ են: Բուն Աղվանքն էլ կապ չունի Աղբրեանի և Աղբրեանական Հանրապետության հետ, իսկ աղբրեանցիք՝ աղվանների հետ:

Գրիգոր Մագիստրոսը հստակորեն տարանջատում է «մերոյս սեփհակն» Աղուանից աշխարհը բուն Աղվանից (Ալբանիա) պետությունից: Այսպես. «Քանզի զի՞նչ օգուտ էր մեզ այսքան ազանց իմաստնոց և գիտնոց Հոռվմայեցւոց, Յունաց, Հայոց և Վիրացւոց, Աղուանից և այլ բազում ազգաց թիրել զԱնտարանն Աստուծոյ»<sup>16</sup>: Գրողը տարանջատել է ոչ միայն տարբեր ազգերը, այլև՝ պետությունները: Այս մտայնությունը չի խաթարվում նաև այլ աղբրեանցիք, երբ նա խոսում է Հայոց և Աղվանից եկեղեցիների մասին, իբրև առանձին և ինքնուրույն ինստիտուտների: Նա նշում է, որ աղանդավոր Սմբատ Զարհավանցուն մերժել է ոչ միայն հայ հոգևոր դասը, այլև՝ աղվանից. «Անիծեալ զնոսա բոլոր Հայաստանեայց և Աղուանից քահանայապետացն»<sup>17</sup>: Նույն տագնապը և մտահոգությունը Մագիստրոսը արտահայտում է հարևան եկեղեցիների պատկերության մասին՝ նշելով. «Զհարիւր և զօթանասուն ամ երեքտասան քահանայապետք Հայոց մեծաց, նոյնչափ և Աղուանիցն և բիր եպիսկոպոսք և անթիւ քահանայք և ստրակաազունք բողոքեցին ձեզ և ոչ լուայք...»<sup>18</sup>: Խարհրդայնացումից հետո աղբրեանցիք շրջանառության մեջ դրեցին այսպես կոչված վիճելի տարածքների գաղափարը:

Ինչ վերաբերում է Ծարին, ապա այն շատ հեռու է բնական սահմանից՝ Կուրից, և համարյա ոչ մի դեպքում չի եղել վիճելի տարածք: Դա տեղի ունեցավ միայն այս դարի սկզբներին, երբ աղբրեանցիք ստացան Հայաստանի հյուսիսային տարածքների մի ղզալի մասը: Նրանք պահանջում էին հայերից, որ ոչ մի կերպ չըմբոստանան ու չբողոքեն իրենց դեմ: Իսկ մյուս կողմից՝ Մոսկվայի ճեմամբ սկսեցին «Քաջցնել» իրենց ազգակցությունը թուրքերի հետ և առերես առաջ քաշեցին այսպես կոչված «Կովկասյան Ալբանիայի» տեսությունը, որն իր հերթին նրանց պարտադրված գաղափար էր: Այս երկրորդ տեսությունը նաև բավականին նպաստավոր էր վերջիններիս համար, քանի որ այդ ժամանակներում խուսանավելու որոշակի հնարավորություն էր տալիս:

ԽՍՀՄ-ի փլուզումից սկսած՝ նորից գլուխ բարձրացրեց պանթուրանիզմի ախտը: Անգամ արևմտյան քաղաքագետները, ովքեր շատ քիչ կապ ունեն անդրկովկասյան իրադարձությունների հետ, նկատում են պանթուրքիզմի վտանգը. «Բոլոր թուրքերը մի բանակ են», սա է թուրքիզմի դաժան ու սարսափազդու էությունը: Սա քաղվածք չէ Ղուրանից: Սա Զիյա Գյուլբալիի հղած կարգախոսն է, որն էլ Կամախում, Մեքքեյնում և Դեյր էլ Զորում հարյուր հազարավոր հայերի սպանության իսկական շարժառիթը եղավ: 1988 թվականի փետրվարի սումգայիթյան ջարդերը նույնպես այդ են վկայում»<sup>19</sup>:

Բնավ պատահական չէ գուգահեռը 1915 թ. Մեծ եղևնի և 1988 թ. սումգայիթյան ջարդերի միջև, քանի որ դա միևնույն շղթայի տարբեր օղակների անխզելի կապի արդյունք է: Իսկ հայերս գիտնեք այս հորդայական վայրենի ու վտանգավոր գաղափարախոսության գինը<sup>20</sup>: Պայ-

<sup>16</sup> Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, էջ 190—191:

<sup>17</sup> Նույն տեղը, էջ 154:

<sup>18</sup> Նույն տեղը, էջ 167:

<sup>19</sup> Ինչվիդ Լանգ, Քրիստոֆեր Ուոլբր, Հայերը, էջ 76:

<sup>20</sup> S. Zarevанд, Турция и пантурсизм. Париж, 1930, արտատպություն, Երևան, 1991, էջ 133—140:

քարը կշարունակվի այնքան, մինչև կբացվեն Քուրանի ճանապարհները կամ կմոռացվեն առհա-  
վես:

Մերօրյա Քելիբաչարի շրջանը արհեստականորեն ստեղծված և արագորեն վերաբնակեցված  
վարչատարածք էր: Ադրբեջանական պատմագրությունը (և դիվանագիտությունը) շունի համար-  
ժեք պատասխան Սարի, հետևաբար և Արցախ, Ուտիք և Փայտակարան աշխարհների պատկա-  
նելիության հարցին: Սա հավասարապես վերաբերում է նաև Լաչինից Ֆիզուլի ընկած շրջան-  
ների 70-ամյա միտումնավոր վերածեղումներին:

**С. М. МХИТАРЯН — Первоисточники Григора Магистроса о стране Агванк в области Цар (Келбаджар).**—Используя в качестве первоисточника произведения выдающегося средневекового ученого и поэта Григора Магистроса, автор статьи пытается уточнить этнический состав и границы области Цар в пределах Арцаха, ее роль в средневековой армянской действительности. В этой связи исследователь приходит к выводу, что понятия Восточный армянский край, входящие в него области Арцах, Утик и Пайтакаран не тождественны Агванку, а Агванк, в свою очередь, не тождественен современному понятию Азербайджан, в частности, в этническом смысле.